


ԼՐԱՏՈՒ

ԹիՒ 10 - Յուլիս 2026



75 տարի է Սերունդներու Հայեցի Դաստիարակութիւն





Տնօրէնութեան խօսքը

2025-2026 ուսումնական տարեշրջանը՝ բազմատեսակ մարտահրաւերներով երկար ծամբորդութիւն մըն էր եւ ահաւասիկ խաղաղօրէն հասաւ իր աւարտին: Զայն դիմաւորեցինք յոյսով ու վստահութեամբ, շարունակեցինք հաստատ կամքով ու յարատեւ ոգիով, եւ այսօր կը գտնուինք անոր աւարտի սեմին՝ երախտագիտութեան ազնիւ զգացումներով լի:

Այս տարին մեզի համար սովորական ուսումնական շրջան մը չէր, այլ՝ պատմական խորհուրդով ու տօնական շուքով ներշնչուած բացառիկ տարեշրջան մը, որովհետեւ հպարտ սրտով կը նշենք մեր վարժարանին փառապանծ 75-ամեակը: Այս յօբելենական հանգրուանը մեզի վերստին յիշեցուց, թէ վարժարան մը պարզապէս պատերէ ու դասարաններէ կազմուած կառոյց մը չէ: Ան յիշողութիւն է ու առաքելութիւն, ժառանգութիւն է ու շարունակական ուխտ: Անցեալի ծայներուն կենդանի արծազանգն է եւ գալիք սերունդներուն տրուած խոստումը:

Անցնող ուսումնական տարին եւս սկիզբ առաւ տարածաշրջանային բարդ իրադարձութիւններու եւ տագնապալի պայմաններու շուքին տակ: Շարունակուող անորոշութիւնները անխուսափելիօրէն իրենց ազդեցութիւնը գործեցին մեր համայնքին վրայ: Այդպիսի դժուար ժամանակներու մէջ կրթութիւնը կը դադրի պարզապէս ուսուցում ըլլալէ ան կը վերածուի կայունութեան, շարունակականութեան եւ յոյսի կենսատու աղբիւրի: Խոր հպարտութեամբ կ'անդրադառնանք, թէ մեր աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները միասնական ոգիով դիմագրաւեցին այս բոլոր մարտահրաւերները:

Ուստի, մեր խորագոյն երախտագիտութիւնը կը յայտնենք մեր շնորհաշատ բարերարներուն՝ Տէր եւ Տիկին Սէմ եւ Սիլվա Սիմոնեաններուն իրենց անձնուէր նուիրումին եւ աջակցութեան համար:

Կը մաղթեմ խաղաղ, ապահով ու հանգստաբեր արձակուրդ մեր բոլոր աշակերտներուն եւ ընտանիքներուն: Թող այս դադարը իրենց միտքերուն պարզեւ թարմութիւն, սիրտերուն՝ ուրախութիւն, իսկ բոլորիս՝ նորոգուած կորով ու ներշնչում՝ շարունակելու մեր սրբազան առաքելութիւնը: Եւ մինչ մեր հայեացքը վստահութեամբ կ'ուղղենք դէպի գալիք ուսումնական տարեշրջանը, անդրդուելի հաւատքով կը վստահինք, որ եօթանասունհինգ տարիներ բազմաթիւ մարտահրաւերներու դէմ կանգուն մնացած մեր վարժարանը, պիտի շարունակէ բարգաւաճիլ՝ հայ ազգին պարգեւելով նորանոր հասուն պտուղներ:

Ամենաջերմ մաղթանքներով՝ թող այս ամառը ըլլայ խաղաղութեան, հանգստութեան և նոր յոյսերու շրջան մը: Կը մաղթենք խաղաղութիւն մեր սիրելի Լիբանանին: Թող մեր հայրենիք դարձած այս երկիրը վերստին լեցուի յոյսով, ապահովութեամբ և պայծառ ապագայի հաւատքով:

Երախտագիտութեամբ՝

Սեւանա Սեմերձեան Տարագձեան

Ամփոփ Տեղեկագիր Վահան Թեքեան Միջն. Վարժարանի 2025-2026 Տարեշրջանի Ծրագիրներուն եւ Գործունէութիւններուն


Ակադեմական Գործունէութիւններ

Նկարագիրի Կերտման Ծրագիր

Բարեկամութիւն



Կարգապահութիւն



Դասախօսություն, ՄԱԿ-ի եւ, SDG-ներու Մասին

27 Ապրիլ 2026-ին, պատիւը ունեցանք հիւրընկալելու Տիկ. Սոսի Շահինեան-Սաղըրեանը, որ հեղինակ է մանկապատանեկան երեք գիրքերու: Ան հանդիպում մը ունեցաւ նախակրթարանի Ե. եւ Զ. դասարաններու աշակերտներուն հետ եւ ներկայացուց իր հեղինակած գիրքերէն մէկը՝ ,Երեք Քոյրերուն Նպատակները, ուր անդրադարձաւ, ՄԱԿ-ին եւ, Կայուն Զարգացման Նպատակներ-ուն (SDG):



Դասախօսություն Ճանապարհային Անվտանգության Մասին

29 Ապրիլ 2026-ին Յակոբ Պարսամեան սրահին մէջ մեր վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի աշակերտները բաժնուեցան երկու խումբերու՝ մասնակցելու հետաքրքրական եւ ուսուցողական դասախօսութեան մը ճանապարհային անվտանգութեան մասին, որ կազմակերպուած էր, Kunhadih կողմէ՝, Fabrianosի հետ գործակցաբար:



Երկրի Օր



Խաղաղության Ձայներ

Արաբերէնի դասապահերուն ընթացքին, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ դասարաններու աշակերտները մասնակցեցան ուսուցողական ոճին վրայ հիմնուած գործունէութեան մը՝ նպատակ ունենալով զարգացնել իրենց գրաւոր արտայայտչական հմտութիւնները:

Այս գործունէութիւնը աշակերտներուն ընձեռեց գեղեցիկ հնարատրութիւն մը՝ իրենց ստեղծագործ միտքը զարգացնելու եւ ազատօրէն արտայայտելու իրենց գաղափարներն ու զգացումները: Անոնք պատրաստեցին գունագեղ պատառներ, որոնց վրայ արտացոլուեցան խաղաղութեան և ապահովութեան կոչեր պարունակող պատգամներ՝ յատկապէս նուիրուած մեր սիրելի Լիբանանին:



Ծաղիկ Դասարանը Հպարտ Քայլերով Կ'ուղղուի Դէպի Նախակրթարան

2 Յունիս 2026-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի Ծաղիկ դասարանի փոքրիկները առիթը ունեցան բարձրանալու Նախակրթարանի Ա. դասարան, մօտէն տեսնելու եւ ծանօթանալու համար յաջորդ տարւոան իրենց դպրոցական օրերը:



Ձեռային Աշխատանքների Ցուցադրութիւն



Մշակութային Տօներ

Ապրիլ 24

22 Ապրիլ 2026-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 111-ամեակի ոգեկոչում, ուր գործադրուեցաւ դասական ու կոկիկ ոճով գեղարուեստական յայտագիր մը: Այս առիթով օրուան պատգամը հարուստ ու բովանդակալից տեղեկութիւններով փոխանցեց, այս անգամ որպէս հիւր բանախօս վարժարանիս ժրաջան փոխ ատենապետ՝ Տիար Պերժ Արապեանը:



Կրթական և Մշակութային Պտույտներ

Այցելություն՝ Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսավորիչ Մայրավանք

Հայոց Ցեղասպանության Ոգեկոչում

23 Ապրիլ 2026-ի առաւօտեան, Վահան Թէքէեան վարժարանի Միջնակարգ դասարաններու աշակերտները, ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքի շրջափակէն ներս տեղի ունեցած Հայոց Ցեղասպանութեան 111-ամեակի աշակերտական հաւաքին: Վարժարանիս կողմէ ծաղկեպսակ զետեղուեցաւ նահատակաց յուշահամալիրի անմար կրակին առջեւ:

23 Ապրիլ 2026-ի երեկոյեան, եւ Ուրբաթ 24 Ապրիլ 2026-ի առաւօտուն վարժարանիս Միջնակարգ դասարաններէն խումբ մը աշակերտներ մասնակցեցան Հայոց Ցեղասպանութեան 111-ամեակի միջգաղութային համաերիտասարդական հսկում-հաւաքին:



Այցելություն Յակոբ Տէր Մելքոնեան Թատերասրահ

ԹՄՄ Գրիգոր Տէկիրմէնձեան Մանկապատանեկան Թատերախումբի, Թումանեան Հինգ Ներկայացում

17 Ապրիլին վարժարանիս Նախ. Ա-էն Միջն. Գ. դասարանի աշակերտները ներկայ գտնուեցան ԹՄՄ Գրիգոր Տէկիրմէնձեան Մանկապատանեկան Թատերախումբի, Թումանեան Հինգ ներկայացումին, ուր իրենց դասընկեր-դասընկերուհիներէն 8 անհատներ մասնակցութիւն բերած էին այս թատրոնին մէջ:



Աշակերտի Տպաւորութիւն

Ուրբաթ, 17 Ապրիլին, մեր վարժարանի աշակերտները այցելեցին Տէր Մելքոնեան Թատերասրահ՝ դիտելու մեր ընկերներուն և դասընկերներուն բեմական ներկայացումը: Ներկայացումը ոչ միայն զուարճալի էր, այլև ներշնչող՝ ընդգրկելով հայ մեծանուն գրող և բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի հինգ տարբեր պատմութիւններ:

Մեզի համար շատ գեղեցիկ փորձառութիւն էր տեսնել, թէ ինչպէս մեր ընկերները վստահութեամբ և մեծ ոգետրութեամբ կենդանութիւն տուին այս պատմութիւններուն բեմի վրայ: Այն հանգամանքը, որ անոնց համար առաջին անգամն էր բեմ բարձրանալը, անելի տպաւորիչ դարձուց անոնց ձեռքբերումը: Անոնց տաղանդը, նուիրումը և համագործակցութիւնը ակնյայտ էին ամբողջ ներկայացման ընթացքին, և անոնք իսկապէս գրաւեցին հանդիսատեսին սրտերը:

Միջն. Գ. Դասարան - Վանա Էքմէքձեան

Համազգային, Արեգ Մանկապատանեկան Թատերախումբի ,Յէ Ճան Ղափամա Ներկայացում

26 Մայիս 2026-ի առաւօտեան, վարժարանիս նախ. Ե. եւ Ձ. դասարանի
աշակերտները ներկայ գտնուեցան Լիբանանի Համազգային, Արեգ
մանկապատանեկան թատերախումբի, Յէյ Ճան Ղափամա
աշակերտական թատերական ներկայացման:



Տարբեր Տոնակատարություններ

Ուսուցչաց Տոն

19 Մարտ-ին Միջնակարգ Գ. դասարանի աշակերտները իրենց դաստիարակ՝ Օրդ. Միզան Թազեանին առաջնորդությամբ, իրայատուկ եւ խորհրդանշական ձեով նշեցին Ուսուցչաց Տոնը նախակրթարանի ուսուցչարանէն ներս:

26 Մարտին ՌԱԿ Շուշան Վարդենի ակումբի վարչութիւնը ատենապետութեամբ՝ Տօքթ. Անի Ղազէլեանի այցելութիւն մը կատարեց Վահան Թէքէեան վարժարանի ուսուցչակազմին՝ ուսուցչաց տօնին առիթով, զանոնք պատուելու եւ շնորհատրելու համար:



Զատիկյան Տօնակատարութիւն

1 Ապրիլ 2026-ի Զատիկյան տօնին առիթով մեծ տօնախմբութիւն էր մեր վարժարանին մէջ:


Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք նախկին թէքէեանցի Աւագեան քոյրերուն եւ իրենց մօր Ալիս Աւագեանին, որոնք ամէն ջանք դնելով յաջողցուցին մեր վարժարանին Սրբ. Զատիկյան տօնակատարութիւնը:





Աշակերտական Գործունեություններ Նուիրուած Վարժարանիս 75-ամեակին





Աշակերտի Տպաւորութիւն

Վարժարանիս 75-ամեակի տօնակատարութիւնները մեզի համար եղան իսկապէս բացառիկ և յիշարժան փորձառութիւն մը: Այս ամբողջ տարուան ընթացքին մասնակցեցանք բազմաթիւ իմաստալից ձեռնարկներու, որոնք մեզ անելի մօտեցուցին իրարու և օգնեցին մեզ գնահատելու մեր վարժարանին հարուստ պատմութիւնն ու արժէքները:

**Միջն. Ա. դասարան
Սելենա Էլ Խուրի**

Վերջին Զանգ

4 Յունիս 2026-ին, տեղի ունեցաւ մեր վարժարանի 2025-2026 տարեշրջանի վերջին զանգը:

Յուզիչ բաժանում մեր վարժարանի Միջն. Գ. դասարանի աշակերտներու կողմէ իրենց դպրոցէն, ինչպէս նաեւ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտէզի Ծաղիկ դասարանի աստղերէն, երբ կ'աարտեն Մանկապարտէզը եւ կ'անցնին Վահան Թէքէեան Միջնակարգ վարժարանի Նախակրթարանի բաժինը:



Մարզական Օր

5 Յունիս 2026-ին, վարժարանիս շրջափակին մէջ տեղի ունեցաւ վարժարանիս 75- ամեակին նուիրուած մարզական օր: Այս առիթով, վարժարանիս հիմնադրութեան 75-ամեակին նուիրուած յօբելենական ձեռնարկներու ծիրէն ներս, աշակերտներուն բաժնուեցան յատուկ պատրաստուած յիշատակի վերնաշապիկներ եւ գլխարկներ՝ որպէս նուէր:

Ձեռնարկին յատուկ շուք հաղորդեց օրուան հիւրը՝ Թէքէեանցի նախկին շրջանաւարտ Գէորգ Գէորգը, որ իր մարզական ձեռքբերումներով կը շարունակէ պատիւ բերել իր դպրոցին:





Աշակերտներու Տպաւորութիւններ

Մեր վարժարանի 75-ամեակին նուիրուած մարզական օրը մեզի համար դարձաւ անմոռանալի յիշատակ մը՝ լեցուն ուրախութեամբ, խանդավառութեամբ և ընկերային ոգիով: Մասնակցեցանք տարբեր մարզական խաղերու և մրցումներու՝ վայելելով միասնականութեան, համագործակցութեան և առողջ մրցակցութեան գեղեցիկ պահերը:

Միջն. Գ. դասարան - Աղասի Փափազեան

Կը փափաքինք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել վարժարանիս՝ այս գեղեցիկ և յատուկ օրը կազմակերպելուն համար: Մեզի համար մեծ ուրախութիւն էր ստանալ 75-ամեակին նուիրուած յատուկ պատրաստուած նուէրները՝ վերնաշապիկներն ու գլխարկները, որոնք խորհրդանշեցին մեր միասնականութիւնը և կապը մեր սիրելի վարժարանին հետ:

Միջն. Բ. դասարան - Կարէն Թերզեան

Յատուկ Ձեռնարկներ

“Բնութեան Համեղ Պարգեւները”

16 Ապրիլ 2026-ին, Վահան Թէքէեան վարժարանի Սէմ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտէզի փոքրիկները, ներկայացուցին „Բնութեան Համեղ Պարգեւները խորագրով յաջող ձեռնարկը:



Մայրերու Օրուայ Ձեռնարկ

19 Մայիս 2026-ին, Պեյրուֆի Վահան Թեքեան Վարժարանի հոգաբարձուքինն ու տնօրէնութիւնը՝ ծնողաց յանձնախումբի նուիրեալ եւ ժրաջան մայրերուն օժանդակութեամբ, հանդիսաւոր կերպով կազմակերպեցին, Մայրերու Օրուան տօնակատարութիւնը վարժարանիս, Յակոբ Պարսամեան սրահին մէջ: Սոյն հանդիսութիւնը կը նախագահէր՝ վարժարանիս հանդէպ յատուկ հոգատարութիւն տաժող Տիկ. Ալիս Աւագեան: Գործադրուեցաւ գեղարուեստական ծոխ յայտագիր մը, որ արժանացաւ ներկաներուն բարձր գնահատանքին:





Մրցանակներ

Ֆապրիանոյի Արուեստի Մրցույթ

31 Մարտ 2026-ին վարժարանս այցելեց Ֆապրիանո գծագրական արուեստանոցի տնօրէն՝ Տիար Ժան Գլոտ Նահիասը, մրցանակներ եւ գնահատագրեր յանձնելու 2025-ի գծագրական մրցանքին շահող աշակերտներուն՝ Միջն. Ա. դասարանէն Մարիսելլա Աշճեանին եւ Միջն. Բ. դասարանէն Շարաէլ Սալէմէ Ալպարըշին:



Արտասանական Մրցում

Կազմակերպութեամբ՝ ՀԲԸՄ Ահրամձեան կեդրոնի, Խօսնակ մշակութային վարչութեան, 9 Մայիս 2026-ին, նոյն կեդրոնէն ներս տեղի ունեցաւ միջոգորոցական արտասանական մրցում, մասնակցութեամբ՝ լիբանանահայ վարժարաններու նախակրթարանի Ե. եւ Զ. կարգերու աշակերտներու: Սոյն ձեռնարկին մասնակցեցան մեր վարժարանի Ե. դասարանի աշակերտուհի Մարիսսա Ֆաթֆուֆ եւ Զ. դասարանի աշակերտուհի Ռիթա-Մարիա Պաշտգճեան, որոնք գեղեցկօրէն ասմունքեցին բանաստեղծութիւններ տիար Համբիկ Մարտիրոսեանէն:

Ուրախութեամբ կը յայտնենք, թէ Ե. դասարանի աշակերտուհի Մարիսսա Ֆաթֆուֆ արժանացաւ 3-րդ մրցանակին:

Կը շնորհաւորենք մեր աշակերտուհիները, մաղթելով անոնց յարատեւ յաջողութիւններ:



“Ճիշդ Հնչենք” Մրցում

Միջնակարգ Ա. դասարանի աշակերտ Մէթիու Իշխանեան արժանացաւ երրորդ մրցանակին՝ Վանայ Ձայն ռատիօկայանի կազմակերպած, Ճիշդ Հնչենք մրցոյթի եզրափակիչ հանգրուանին:



ՍԷՄ ԵՒ ՍԻՂՎԱ ՍԻՄՈՆԵԱՆ ՄԱՆԿԱԿԱՐՏԵՂԻ ԱՃԱՎԵՐՋԻ ՀԱՆՈՒՏ ՈՒ ՎԿԱՅԱԿԱՆԱԳ ԲԱՉԽՈՒՄ

Ի պատիւ մեր դպրոցի 75-ամեակին

Շաբաթ, 13 Յունիս 2026, երեկոյեան ժամը 6:00-ին, Յակոբ Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ ՍԷՄ ԵՒ ՍԻՂՎԱ ՍԻՄՈՆԵԱՆ ՄԱՆԿԱԿԱՐՏԵՂԻ ԱՃԱՎԵՐՋԻ հանդէսն ու վկայականներու բաշխման արարողութիւնը, մասնակցութեամբ մանկապարտէզի բոլոր աշակերտներուն եւ աւարտականներուն:

Մեր աշակերտները ներկայացուցին գունագեղ գեղարուեստական յայտագիր մը, արտասանեցին խօսքեր հայերէն, արաբերէն եւ անգլերէն լեզուներով, որմէ ետք աւարտական աշակերտներուն յանձնուեցան իրենց առաջին վկայականները:



Ամավերջի Հանդես ու Վկայականաց Բաշխում

Շաբաթ, 27 Յունիս 2026, երեկոյեան ժամը 7:30-ին, մեր դպրոցի ամավերջի հանդեսն ու վկայականաց բաշխման արարողութիւնը տեղի ունեցաւ Վահան Թէքէեան Վարժարանի խաղաղայրին մէջ: Հանդիսութիւնը համախմբեց մեր նախակրթարանի եւ միջնակարգ բաժիններու աշակերտները, անոնց ընտանիքները, ուսուցչակազմը եւ պատուաւոր հիւրերը՝ տօնելու եւ արժեւորելու յաջողութեամբ աւարտած ուսումնական տարին:

Նուիրուած մեր դպրոցի 75-ամեակին՝ յայտագիրը ներկայացուեցաւ ,Պանծալի Անցեալ, Պայծառ Ապագայ խորագիրին ներքեւ: Մեր աշակերտները ներկայացուցին ստեղծագործ ու գունագեղ գեղարուեստական յայտագիր մը՝ բաղկացած հայերէն, արաբերէն և անգլերէն լեզուներով խօսքերէ, երգերէ և պարերէ,որոնք արտացոլացուցին թէ՛ հանդիսութեան տօնական ոգին եւ թէ՛ մեր դպրոցի արժէքները:



Երեկոն աւարտեցաւ վկայականաց բաշխման արարողութեամբ, որուն ընթացքին աւարտական աշակերտները հպարտութեամբ ստացան իրենց վկայականներն ու մրցանակները՝ նշանաւորելով եւս մէկ յաջողութեամբ աւարտած ուսումնական տարի մը եւ տօնելով մեր դպրոցի պատմութեան յիշարժան հանգրուաններէն մէկը:





ՈՒՍՈՒՄԸ երբեք չի դադարի

Դասերը չափարկվեցին, երբ անորոշությունը կը շրջապատեր մեզ և խոչընդոտերը անսահման կը թուլին, մեր վարժարանը անսասան ժառանգորդ արարեց մեզ:

Հակառակ բոլոր դժուարություններին, մեր աշակերտները, որ ուսումը երբեք չդադարի շարունակելով մեր դասերը առցանց, որովհետև խորապես կը հաւատանք, որ կրթությունը շրջությունն ան չէ, այլ անհրաժեշտություն է մանաւանդ ճգնաժամի պահերուն:

Դասերը չափարկվեցին, երբ անորոշությունը կը շրջապատեր մեզ:



մեր աշակերտներուն: Ան կը զօրացնէ զանոսը, զոգնակի վերադարձնելու ներքին դժուարությունները և պատրաստութիւն տալիս ամուր արագաշարի մը:



Միասին կը շարունակենք սորվիլ, աճիլ և յառաջանալ:



Մենք կանգնեցանք մեր աշակերտներուն կողքին առցանց:

Երբ պայմանները թոյլ տուին,

Մենք ՎԵՐԱԴԱՐՄԱՆՔ ԱՌ ԱՆԵՒ ԶՕՐԱՌՈՐ

Մենք վերականգնեցինք ներկայութեամբ ուսուցումը և նպարտութեամբ շարունակեցինք դասարանային ուսումը:



ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ, ՅՈՅՍ, ԳԻՏԵԼԻՔ, ԱՊԱԳԱՅ



ԱՅՍՈՐ

մեր դասարանները կենսառակ են ապրումով և կենսառակ լինելով արտազուգահեյտով մեր ետիքումը կրթութեան շարունակականութեան և որակին:



ՄԵՆՔ ՀՊԱՐՏ ԵՆՔ,

որ իրադրանքիդ փոփոխ միշտ որոշումներ կատարեցինք կանգնելով մեր աշակերտներուն կողքին թէ առցանց և թէ դասարանին մէջ:



LEARNING Never Stops

During the most challenging times of war, when uncertainty surrounded us and obstacles seemed endless, our school remained steadfast in its mission.

Against all odds, we ensured that learning never stopped by continuing our classes online—because we firmly believe that education is not a luxury, but a necessity, especially in times of crisis.

Education during war provides



for our students. It empowers them to rise above the present hardships and prepares them for a stronger future.



Together, we learn, grow & move forward.



We stood by our students, online...

AND WHEN CIRCUMSTANCES ALLOWED, WE RETURNED—STRONGER THAN EVER!

As soon as circumstances allowed, we resumed physical attendance and have proudly continued in-person learning for quite some time now.



Together, we continue to learn, grow, and move forward.



TODAY,

our classrooms are vibrant, safe, and full of life—reflecting our commitment to both continuity and quality in education.



WE ARE PROUD

that we made the right decisions at every stage—standing by our students, whether online or in the classroom.



Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574